ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
Մ. Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտի տնօրեն՝
բանասիրական գիտությունների թեկնածու
Հերիքնազ Որսկանյան

Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի Արտասահմանյան գրականության, գրական կապերի և գրականության տեսության բաժնի 2026 թ. հունիսի 10-ի նիստի արձանագրությունից

Աշխեն Էդուարդի Զրբաշյանի
«Հայկական ոտանավորի տաղաչափական և ստրոֆիկական կառուցվածքի հիմնական խնդիրներ»
Ժ. 01.04 («Գրականության տեսություն») մասնագիտությամբ բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ առաջատար կազմակերպության

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նիստին մասնակցում էին՝
բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ Հ. Մուսայելյանը, բանասիրական գիտությունների թեկնածուներ Գ. Կարագյոզյանը /հեռավար/, Ա. Սողոյանը /հեռավար/, Ա. Զարգարյանը, Լ. Գասպարյանը, դոցենտ Ք. Բեջանյանը, դոցենտ Վ. Արսենյանը /հեռավար/, դոցենտ Զ. Հայրյանը և Ք. Հովհաննիսյանը:

Նիստը վարում էր
Արտասահմանյան գրականության, գրական կապերի և գրականության տեսության բաժնի վարիչ՝ բ.գ.թ., դոցենտ Քրիստինե Բեջանյանը:

Նիստի քարտուղար՝ Քրիստինե Հովհաննիսյան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

Աշխեն Էդուարդի Զրբաշյանի *«Հայկական ոտանավորի տաղաչափական և ստրոֆիկական կառուցվածքի հիմնական խնդիրներ»* թեմայով ատենախոսությունը Երևանի պետական համալսարանում գործող՝ ՀՀ ԲԿԳԿ-ի՝ գրականագիտության 012 մասնագիտական խորհրդի նիստում պաշտպանության երաշխավորելու հարցը՝ Ժ. 01. 04 («Գրականության տեսություն») մասնագիտությամբ բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ բաժնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ Քրիստինե Բեջանյանը, բ.գ.դ., դոցենտ Հովիկ Մուսայելյանը, բ.գ.թ., դոցենտ Վահե Արսենյանը /հեռավար/, բ.գ.թ. Լուիզա Գասպարյանը, բ.գ.թ., դոցենտ Զառա Հայրյանը, բ.գ.թ. Գոհար Կարագյոզյանը

/հեռավար/, բ.գ.թ. Աստղիկ Սողոյանը /հեռավար/, բ.գ.թ. Արա Զարգարյանը և Քրիստինե Հովհաննիսյանը:

Ելույթ ունեցողները նշեցին, որ ատենախոսությունը նվիրված է ժամանակակից գրականագիտության մեջ առանձնակի կարևորություն ունեցող և խիստ արդիական հարցերից մեկին՝ հայ բանաստեղծական արվեստի տաղաչափական և ստրոֆիկական կառուցվածքի տեսական և պատմական հիմնախնդիրների քննությանը և ընդգրկում է չափածոյի ձևերի համակարգային վերլուծություն՝ սկսած հին և միջնադարյան տաղաչափական ավանդույթներից մինչև նորագույն շրջանի պոետական փորձառություն: Ատենախոսն բացահայտում է այն միտումներն ու փոփոխությունները, որոնց ենթարկվել է հայկական պոեզիան իր բազմադարյան զարգացման ընթացքում՝ անցնելով տարբեր փուլերով և ենթարկվելով տարբեր ժողովուրդների գրական ազդեցությունների:

Հայ բանաստեղծական արվեստի տաղաչափական համակարգի և տնային (ստրոֆիկական) կառուցվածքի քննությունը հայ գրականագիտության ամենաբարդ ու քիչ լուսաբանված տիրույթներից է: Ատենախոսությունը նվիրված է հենց այս հիմնախնդրին, ինչն էլ պայմանավորում է հետազոտության **արդիականությունը**: Գրականության զարգացման արդի փուլում անհրաժեշտություն է առաջացել վերարժևորելու հայկական ոտանավորի կառուցվածքային առանձնահատկությունները: Ա. Ջրբաշյանն իրավացիորեն նշում է, որ մինչ այժմ չի գրվել որևէ աշխատություն, որտեղ հայ պոեզիայի տաղաչափական քննությունն ամփոփված լինի ամբողջական տեսքով: Հավելենք, որ թեմայի արդիականությունը պայմանավորված է այդ բացը լրացնելու, ինչպես նաև հայ գրականագիտության մեջ տաղաչափական խնդիրների նկատմամբ հետաքրքրության աճ ձևավորելու հանձնառությամբ: Այսպիսով, հեղինակը **նպատակ** է դրել ձևավորել հայ չափածոյի ստրոֆիկ կառուցվածքների համապարփակ տիպաբանություն՝ համադրելով եվրոպական ֆորմալիստական տաղաչափագիտության (հատկապես Բ. Տոմաշևսկու դպրոց) և հայ տաղաչափական մտքի (Մ. Աբեղյան և հետագա զարգացումներ) հիմնական մեթոդաբանական դրույթները: Թեմայի արդիականությունը կասկած չի հարուցում, քանի որ հայ պոեզիայի ստրոֆիկ համակարգերի ամբողջական նկարագրությունն ու տիպաբանական դասակարգումը մինչ օրս շարունակում են մնալ մասնակիորեն լուծված խնդիր:

Ատենախոսության մեջ հեղինակը հաջողությամբ ներկայացրել է տաղաչափական տարբեր համակարգերի (վանկական, վանկաշեշտային, տոնիկական) և այլն պատմական զարգացումը հայ պոեզիայում: Գիտական լուրջ նորույթ է ստրոֆիկական (տնային) ձևերի համակարգված դասակարգումը, որը թույլ է տալիս նորովի դիտարկել բանաստեղծական տեքստի ներքին ռիթմիկան և հնչերանգային կառուցվածքը: Հետազոտության հիմքում ընկած է հարուստ փաստական նյութ՝ դասական շրջանի հեղինակներից մինչև 20-րդ դարի և արդի պոեզիայի լավագույն նմուշները:

Առանձնակի ուշադրություն է պահանջում աշխատության տեսական առանցքը՝ ստրոֆայի (տան) սահմանման և դասակարգման փորձը, որտեղ հեղինակն առանձնացնում է տնային (ստրոֆիկ), ոչ տնային (աստրոֆիկ), միջանկյալ և բանաստեղծական կայուն ձևերի խմբերը: Այս դասակարգումը, ընդհանուր առմամբ, տրամաբանորեն հետևողական է և թույլ է տալիս ընդգրկել չափածոյի

կառուցվածքային հիմնական տիպերը, սակայն դրա տեսական հիմնավորումը որոշ դեպքերում պահանջում է ավելի խիստ հայեցակարգային հստակեցում: Մասնավորապես, «ռիթմահնչերանգային ավարտունություն» հասկացությունը, որը դիտարկվում է որպես ստրոֆայի սահմանազատման առանցքային չափանիշ, ներկայիս ձևակերպմամբ մնում է մասամբ ինտուիտիվ-նկարագրական մակարդակում և կարիք ունի ավելի ճշգրիտ լեզվաբանական և պրոսոդիական գործառնականացման: Նույնը վերաբերում է նաև «միջանկյալ ձևերի» ենթադասակարգումներին, որտեղ տարբեր կառուցվածքային մակարդակների համադրությունը երբեմն չի ուղեկցվում բավարար մեթոդաբանական տարանջատմամբ:

Հարկ է նշել, որ **մեթոդաբանական** առումով աշխատանքը բնութագրվում է բազմաղբյուրային տեսական հենքով, որտեղ միավորվում են ռուսական ֆորմալիզմի, հայ ավանդական տաղաչափագիտության և արևելյան բանաստեղծական ձևերի կառուցվածքային մոտեցումները: Այս միասնականությունը սկզբունքորեն արդյունավետ է, քանի որ թույլ է տալիս դիտարկել հայ չափածոն համաշխարհային տաղաչափական սիստեմների համատեքստում, սակայն միաժամանակ առաջացնում է որոշ մեթոդաբանական լարվածություններ: Մասնավորապես, տարբեր տեսական դպրոցների հասկացութային ապարատները միշտ չէ, որ ինտեգրվում են միասնական վերլուծական համակարգի մեջ, ինչի հետևանքով որոշ եզրահանգումներ ստանում են նկարագրական-էմպիրիկ բնույթ առանց բավարար տեսական սինթեզի: Տերմինաբանական մակարդակում ևս նկատելի է որոշակի բազմիմաստություն, հատկապես «ստրոֆոիդ», «ստանս», «ազատ ստանս» (ատենախոսություն՝ էջ 239, 241, 340) և հարակից հասկացությունների կիրառության պարագայում, որոնք միջազգային տաղաչափագիտության մեջ ունեն տարբեր մեկնաբանություններ: Հավելենք, որ այնուամենայնիվ Ա. Ջրբաշյանի առաջարկած հայեցակարգը հիմնվում է հարուստ տեսական և մեթոդաբանական բազայի վրա, որը ներառում է գլխավորապես հայ, ռուս, գերմանացի, անգլիացի և ամերիկացի հայտնի տեսաբանների, փիլիսոփաների և գրականագետների, ինչպես՝ օրինակ՝ Պատրիկ Կոլոնել Սուփսի, Փոլ Ֆասելի, Հանս-Գեորգ Գադամերի, Յուրի Տինյանովի, Միխաիլ Գասպարովի, Վալերի Բրյուսովի, Վիկտոր Շկլովսկու և այլոց կարևորագույն դրութները:

Հետազոտության **առարկան** ընդարձակ է և բազմապլան: Ատենախոսությունը (**ծավալը** 355 էջ) գրված է վերլուծական, պատմահամեմատական, նշանագիտական, տիպաբանական **մեթոդների** կիրառմամբ և ունի հստակ ու տրամաբանված կուռ **կառուցվածք** *Ներածություն, երեք* ծավալուն *գլուխ*, որոնք իրենց հերթին ունեն մի քանի *ենթագլուխ* (1-ինը՝ երկու, 2-րդը՝ ութ, 3-րդը՝ վեց, իսկ որոշ ենթագլուխներն էլ բաժանված են պարագրաֆների), *եզրակացություններ* և 236 անվանում ներառող *աղբյուրների ցանկ*:

Ատենախոսության **առաջին** գլուխը («***Հայ տաղագիտության պատմության փուլերը***») բաղկացած է երկու ենթագլխից: *Առաջինում* «*Հայկական ոտանավորի բնույթի հարցերը մինչաբեղյանական շրջանի հայ տաղագիտության մեջ*», ատենախոսը ներկայացնում է հայ տաղագիտության մինչաբեղյանական շրջանի ուսումնասիրությունները, որոնք վերաբերում են հայ հին բանահյուսության, միջնադարյան հոգևոր երգերի, նոր շրջանի բանաստեղծության տարաբնույթ խնդիրներին: Այդ շրջանի տաղաչափական ուսումնասիրություններում ատենախոսը

առանձնացնում է մի քանի հիմնական դրույթներ, այն է՝ ա) նոր տաղաչափությունը միջին տեղ է գրավում շեշտական և ոչ շեշտական ոտանավորների միջև, բ) հիմնականում վանկական է, կրում է արևելյան պոեզիայի ազդեցությունը, գ) թվական նոր ոտանավորն անպայմանորեն զուգակցվում է հանգի հետ, դ) մեր նոր ոտանավորը շեշտային է (տես ատենախոսություն՝ էջ 43-44, սեղմագիր՝ էջ 11-12): Այս ենթագլուխը բաժանված է *հինգ պարագրաֆների*, որտեղ ներկայացված է հայ տաղագիտական մտքի պատմությունը, ընդ որում՝ մինչաբեղյանական շրջանի քննությունն ընդգրկում է գերազանցապես Մխիթարյանների տարբեր աշխատություններ, թարգմանությունների առաջաբաններ, «Բազմավէպ»-ում և այլ պարբերականներում տպագրված հոդվածներ: Հանգամանալից կերպով ներկայացված են այդ շրջանում ձևավորված տեսակետներն ու ծագած բանավեճերը հայկական ոտանավորի բնույթի շուրջ, Արսեն Բագրատունու «հայկական չափի» տեսությունն ու դրա կիրառությունները ինչպես գրաբար, այնպես էլ աշխարհաբար մի շարք երկերում:

Երկրորդ «Մ. Աբեղյանի դերը հայ տաղագիտության մեջ. Աբեղյանի տեսության առանձնահատկությունները» վերնագրված *ենթագլուխում* բավական հանգամանալի կերպով ներկայացված է Աբեղյանի տաղաչափական տեսությունը. ատենախոսն անդրադառնում է նաև այդ տեսության ամենավիճելի կողմին՝ հայկական ոտանավորի շեշտային բնույթին վերաբերող հարցադրումներին, որոնք լուրջ քննադատության են ենթարկվել 1960-70-ական թթ. տաղագետների սերնդի կողմից: Ատենախոսը նշում է, որ Աբեղյանը առաջինն է փորձել ստեղծել ամբողջական, տեսական, դասակարգված տաղագիտություն: Նա առաջադրել է հայկական ոտանավորի շեշտային բնույթի վերաբերյալ վարկածը: Սակայն, 1930-ականներին այդ վարկածի դեմ արտահայտվել է Եղ.Չարենցը, որը բանաստեղծությանը բնորոշ է համարում վանկային տաղաչափությունը, ինչը հետագայում հիմնավորեցին տաղագիտության մյուս ուսումնասիրողները Էդ. Ջրբաշյան, Ռ. Պապոյան, Վ. Նավասարդյան, Դ. Գասպարյան, Ռ. Ղուլյան և ուրիշներ:

Ատենախոսության ամենածավալուն **երկրորդ գլուխը** վերնագրված է «***Հայ պոեզիան տաղաչափական լույսի ներքո***» և ունի ***ութ ենթագլուխ***, որոնցից մի քանիսը բաժանված են պարագրաֆների: *Առաջին ենթագլխում «Հայ հին և միջնադարյան բանաստեղծության տաղաչափական առանձնահատկությունները»*, ատենախոսը դիտարկում է հայ հին և միջնադարյան պոեզիան՝ մինչև Գ. Նարեկացի, անվանելով այն անդամավոր ազատ ոտանավոր: Հակադրվելով այն կարծիքին, որ հավասարանդամ վանկական ոտանավորի ձևավորումը օտար ազդեցության հետևանք է, ատենախոսը այն համարում է պոեզիայի բնական զարգացման և կանոնիկացման արդյունք, նաև արտասանվող բանաստեղծության երգվողի նկատմամբ գերակայության հետևանք: *Երկրորդ երթագլխում «Հայ կլասիցիստական քնարերգության տաղաչափությունը»*, անդրադառնալով Մխիթարյան բանաստեղծների ժառանգությանը, ատենախոսը նշում է, որ 19-րդ դարի առաջին տասնամյակների հայ կլասիցիստական պոեզիան տաղաչափական կառուցվածքով գերազանցապես վանկային է, հիմնված է ազգային պոեզիայի ավանդույթների վրա: «*Արևմտահայ և արևելահայ տաղաչափության յուրահատկություններն ու սկզբունքային տարբերությունները*» վերնագիր կրող *երրորդ* երեք պարագրաֆից բաղկացած *ենթագլուխը* քննում է հայկական ոտանավորում շեշտերի ռիթմական դերը: Ատենախոսը նկատում է, որ հայ նոր գրականության ձևավորման սկզբնական փուլում արևելահայ վանկական ոտանավորը հավատարիմ է միջնադարից սերող

տաղաչափական սկզբունքներին, իսկ ավելի ուշ՝ 19-րդ դարի երկրորդ կեսին, արևելահայ պոեզիայում անդամահատումը աստիճանաբար սկսում է կախված չլինել շեշտից: Արևելահայ պոեզիայում անդամավերջի *ը* հնչյունը չի շեշտվում և բառի հետ մեկ ամբողջություն է: Այդ պատճառով արևմտահայ բանաստեղծության մեջ գերակշռում են քառավանկ և եռավանկ անդամները, իսկ արևելահայ բանաստեղծության մեջ՝ հնգավանկ: Արևելահայ և արևմտահայ բանաստեղծության էական տաղաչափական տարբերությունները դրսևորվում են ռիթմական տիրույթում: Այստեղ ներկայացված է կոնկրետ շրջանների բանաստեղծական ժառանգության տաղաչափական քննություն՝ սկսած հայ հին և միջնադարյան բանաստեղծական արվեստի նմուշներից մինչև նորագույն ժամանակների պոեզիան: Հետաքրքիր նյութ է տալիս XIX-XX դարերի արևմտա-արևելահայ պոեզիաների տաղաչափական տարբերությունների վերհանումը, որի համաձայն՝ արևելահայ պոեզիան դիտվում է իբրև ավելի մաքուր վանկական ոտանավորի ձև, իսկ արևմտահայը՝ վանկականի այնպիսի տարատեսակ, որը հաճախ զուգակցվում է շեշտերի կանոնավոր դիրքի հետ:

Երեք պարագրաֆից բաղկացած *չորրորդ ենթագլուխը* վերնագրված է «*Արևմտահայ բանաստեղծության տաղաչափական բազմազանությունն ու զարգացումը (Դանիել Վարուժանի պոեզիայի օրինակով)*», որտեղ քննվում են Վարուժանի բանաստեղծական ժողովածուների ու շարքերի տաղաչափական բազմաբնույթ դրսևորումները: Դրանցից մեկը ատենախոսը ինքն է բնորոշում որպես կամաչափ ոտանավոր, որով բանաստեղծը յուրովի ընդլայնել է ազատ ոտանավորի սահմանները (ատենախոսություն՝ էջ 148-150):

Երկու պարագրաֆից բաղկացած *հինգերորդ ենթագլուխն* է «*Ժողովրդական պոեզիայի և հին հայկական տաղաչափական ձևերի յուրացումը XIX-XX դդ. արևելահայ պոեզիայում*»: Ավ. Իսահակյանի և Եղ. Չարենցի պոեզիայի օրինակով ատենախոսը երևան է հանում հայկական ժողովրդական երգերի, խաղիկների, միջնադարյան պոեզիայի տաղաչափական ավանդների կիրառման յուրահատկությունները նշված բանաստեղծների ստեղծագործություններում: Անդրադարձ է արվում նաև Չարենցի դիտարկումներին հայ տաղաչափության մասին տեսական գրականության վերաբերյալ: Հատկապես հետաքրքիր են Չարենցի պոեզիայի օրինակով տաղաչափական մի համակարգից մյուսին անցման միջանկյալ ձևերի բացահայտումները, ինչպես նաև անտիկ և հայ միջնադարյան չափերի ազդեցության քննությունը:

Վեցերորդ ենթագլխում, որը վերնագրված է «*Դասական ձևերը՝ իբրև ոճավորման միջոց. հեկզամետրային չափերը Եղիշե Չարենցի պոեզիայում*», ներկայացվում են հեկզամետրի ծագումը և փոխակերպումները հին հունական և հռոմեական գրականության մեջ, ապա դրա կիրառման գրապատմական ընթացքը համաշխարհային գրականության մեջ: Ատենախոսը հանգամանալից ներկայացնում է տաղաչափական այս հին ձևի կիրառման առանձնահատկությունները Չարենցի «Գիրք ճանապարհի» ժողովածուում և բանաստեղծի վերջին շրջանի գործերում: Ուշագրավ են Չարենցի թարգմանություններում հեկզամետրի գործառութային քննությունը բնագրին հավատարիմ մնալու տեսանկյունով:

Յոթերորդ ենթագլխում, որը վերնագրված է «*Փոխանցումներ տաղաչափական տարբեր համակարգերի միջև (Ե. Չարենցի «Գիրք ճանապարհի» ժողովածուի պոեմների տաղաչափական քննության օրինակով)*», ատենախոսը քննում է տաղաչափական անցումների խնդիրը: Նկատվում է, որ Չարենցը օգտագործել է

տաղաչափական տարբեր ձևեր ու չափեր՝ ավանդական վանկայինից մինչև ազատ ոտանավորի տեսակները: Դրանք հաճախ անցումային ձևեր են՝ վանկայինից համաշեշտ, համաշեշտից ազատ, որոնք ցույց են տալիս այդ անցումների ձևավորման ընթացքը: Ա. Ջրբաշյանն գրում է, որ «Չարենցի վերջին՝ «Գիրք ճանապարհի» ժողովածուն բանաստեղծի անցած ուղու յուրօրինակ խտացումն էր և՝ բովանդակության, և՝ պոետական ձևերի առումով: Այստեղ կարծես նախորդ շրջանի բոլոր որոնումները բյուրեղանում են, մաքրվում, զտվում և ձեռք բերում միանգամայն նոր ու ինքնատիպ դիմագիծ» (ատենախոսություն՝ էջ 192-193):

Ութերորդ ենթագլուխը ունի «*Արդի հայ բանաստեղծության տաղաչափական ձևերն ու զարգացման միտումները*» վերնագիրը: Ուսումնասիրության առարկա են դառնում 1990-ականների պոեզիայի տաղաչափական դրսևորումները: Դրանք մի կողմից շարունակում են 1960-ականների բանաստեղծական սերնդի որդեգրած միտումները, որոնք ևս ներկայացված են ատենախոսության մեջ: Անդրադարձ է արվում վերլիբրի տիրապետման արդյունքում վանկական ոտանավորում կատարված փոփոխություններին: Վանկական ոտանավորի շրջանակում գերիշխող են դառնում կամաչափ ձևերը, որոնցով այդ պոեզիան մի կողմից շարունակում է Չարենցի ստեղծագործության տաղաչափական ավանդույթը, մյուս կողմից դառնում փորձարարական որոնումների արտահայտություն:

Ատենախոսության **երրորդ գլուխը** վերնագրված է «***Հայ պոեզիայի ստրոֆիկական կառուցվածքի հիմնախնդիրներ***», որտեղ հատկապես արժեքավոր են բանաստեղծության կայուն ձևերին և հայկական սոնետի պատմական քննությանը նվիրված ենթագլուխները: Այսպիսով, *առաջին «Չափածոյի ստրոֆիկական դասակարգման խնդրի շուրջ» ենթագլխում,* ատենախոսը ներկայացնում է ստրոֆա (տուն) տաղաչափական հասկացության գիտական բնորոշումը, մասնավորապես քննելով տարբեր գրականագետների եզրույթները, *(օրինակ՝ Յուրի Լոտմանի, Լևոն Հակոբյանի, Գեորգի Շենգելիի, Օլգա Օվչարենկոյի, Վահան Նավասարդյանի, Վլադիմիր Նիկոնովի, Լեոնիդ Տիմոֆեյևի, Յուրի Տինյանովի, Ալեքսանդր Իլյուշինի, Միխաիլ Գասպարովի /ատենախոսություն՝ էջ 231-238)* ընդունելի է համարում Բորիս Տոմաշևսկու ձևակերպումը և ներկայացված դասակարգումը: Հատկանշական է, որ ատենախոսը այստեղ առաջարկում է ստրոֆիկական կառույցների տարբերակման իր սկզբունքները՝ տնային, ոչ տնային, միջանկյալ, կայուն՝ հիմնավորելով դրանք:

Այս գլխի *երկրորդ ենթագլուխն է «Բանաստեղծության կայուն ձևերի փիլիսոփայական հայեցակարգը (Եղիշե Չարենցի պոեզիայի հիման վրա)»*: Չարենցի բազմաժանր ու բազմաձև պոեզիայի միջոցով ուսումնասիրության առարկա են դառնում բանաստեղծության այնպիսի կայուն ձևերի փիլիսոփայական, կառուցվածքային, գրապատմական քննությունը, ինչպես մոնոստիքոսը, դիստիքոսը, ռուբային, գազելը, բեյթը, թանկան, հոքուն, սոնետը, տրիոլետը, ռոնդոն և այլ (ատենախոսություն՝ էջ 242-262):

Երրորդ ենթագլուխը «Հայկական սոնետի պատմական քննություն», բաղկացած է հինգ պարագրաֆներից և նվիրված է հայկական սոնետի պատմական դրսևորումներին: Ատենախոսի ուշադրությանն են արժանանում հայ պոեզիայում Մխիթարյանների կողմից բանաստեղծության այս ձևի առաջին կիրառումից սկսած հայ գրականության հետագա ընթացքում արևելահայ և արևմտահայ, ապա նաև սփյուռքահայ բանաստեղծության մեջ սոնետի դրսևորումները մինչև 1960-70-ականների արևելահայ բանաստեղծություն: Ներկայացվում են տաղաչափական այս

տեսակի կանոնիկ և ոչ կանոնիկ կիրառումները, բովանդակության և կառուցվածքի առանձնահատկությունները:

Չորրորդ ենթագլուխում («Հայ կլասիցիստների քնարերգության ստրոֆիկական առանձնահատկությունները») քննվում են Մխիթարյանների բանաստեղծության տնային և ապատնային կառույցները, որոնցում, ինչպես ատենախոսն է նկատում, հեղինակները ձգտել են նորարարության: *Հինգերորդ ենթագլուխն* է «*Բալլադի ժանրի ստրոֆիկական կառուցման ձևերը հայ պոեզիայում (Հովհաննես Թումանյանի և Ավետիք Իսահակյանի բալլադների օրինակով)*», որտեղ ատենախոսը նախ անդրադառնում է հայ գրականության մեջ բալլադի ծագումնաբանությանը, ապա քննության առարկա է դառնում Թումանյանի բալլադների կառուցվածքը: Նկատվում է, որ անգամ թարգմանություններում Թումանյանը միշտ չէ, որ պահպանել է բալլադների չափը, ինչը ստեղծել է առավել դինամիկ, խորհրդավոր զարգացող սյուժե: Իսկ արդեն հեղինակային բալլադներում կիրառվել են բազմաբնույթ չափեր և հանգեր՝ բովանդակությունը ավելի համահունչ դարձնելու համար: Ավ. Իսահակյանի բալլադներում սակայն գերակշռում է 11-վանկանի /4+4+3/ տողաչափը, որը պատումը դարձնում է հանդարտ, հանդիսավոր (ատենախոսություն՝ էջ 315): Ատենախոսը նշում է. «*Իսահակյանի բալլադներում և լեգենդներում լայն կիրառություն գտած մյուս չափը 10/5+5/ - վանկանի տողն է կամ դրա տարատեսակը հանդիսացող 10/5 - վանկանի տողերի խառը զուգորդումները, ինչը ստացվում է 5-վանկանի անդամների կամաչափ կիրառության արդյունքում: Կանոնավոր 10-վանկանի երկանդամ տողերով գրված «Յահվեի վրեժը» (1936) հրեական ավանդավեպի չափածո մշակումը և «Հայաստան» ավանդությունը բոլոր քառատող տներում ունեն կանոնավոր խաչաձև լրիվ հանգավորում (abab), իսկ նույն չափն ունեցող «Հայրենի հողը» (1920) և «Ժողովրդի քնարը» (1937) բալլադների որոշ քառատողեր կիսահանգավորված են» (ատենախոսություն՝ էջ 318)*: Այս ամենը թույլ է տալիս եզրակացնել, որ, ի տարբերություն եվրոպական, մասամբ ռուսական բալլադների տների կանոնիկության, հայկական բալլադը նշված հեղինակների ստեղծագործությամբ դրսևորում է ստրոֆիկ ձևերի բազմազանություն:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ աշխատության՝ գիտական զգալի արժեք ունեցող հատվածներից է վերոնշված բանաստեղծական կայուն ձևերի կառուցվածքների վերլուծությունը: Հեղինակը փորձում է բացահայտել ոչ միայն դրանց մետրիկական-ստրոֆիկական առանձնահատկությունները, այլև դրանց ներհյուսված իմաստային կազմակերպման սկզբունքները՝ երբեմն դրանք դիտարկելով որպես որոշակի «փիլիսոփայական կառուցվածքներ»: Այս մոտեցումը հատկապես արդյունավետ է Չարենցի պոեզիայի քննության դեպքում, որտեղ հաջողությամբ ցույց է տրվում արևելյան և եվրոպական բանաստեղծական ձևերի ինտերտեքստուալ և կառուցվածքային սինթեզը: Այնուամենայնիվ, «փիլիսոփայական հայեցակարգ» եզրույթի ընդհանրական կիրառումը բանաստեղծական ձևերի նկատմամբ պահանջում է ավելի խիստ տեսական սահմանազատում, քանի որ ձևաբանական (կառուցվածքային), ժանրային և գաղափարական (սեմանտիկ) մակարդակների համընկնումը չի կարող դիտարկվել որպես ինքնին համարժեքություն:

Երրորդ գլխի *վեցերորդ ենթագլուխը* վերնագրված է «*Հանգի ռիթմական և ստրոֆիկական դերը (Համո Սահյանի պոեզիայի քննության օրինակով)*»: Ըստ ատենախոսի՝ Չարենցից հետո ոչ մի հայ բանաստեղծ այդքան ուշադրություն չի դարձրել չափածոյի հանգահնչունային արտահայտչականությանը, ինչքան Սահյանը:

Վերջինիս ստեղծագործությունում հայ պոեզիային բնորոշ վերջահար շեշտերը փոխարինվում են նախընթաց շեշտերով, որոնք յուրահատուկ գրավչություն են ստեղծում: Ա. Ջրբաշյանն անդրադառնում է Սահյանի պոեզիայում կիրառված արևելյան բանաստեղծական ձևերի առանձնահատկություններին, մասնավորապես գազելի հեղինակային կիրառմանը: Ատենախոսն այստեղ ներկայացրել է սոնետին վերաբերող հսկայածավալ նյութ՝ ցույց տալով բանաստեղծական այդ ձևերի կառուցվածքի և բովանդակության սերտ կապը, ինչպես նաև անդրադարձել է պոեզիայի ստրոֆիկական դասակարգման հիմնախնդիրներին և ցույց տվել ժանրի ու տնային կառուցվածքի կապը, հանգի կազմակերպիչ դերը բանաստեղծական տան կառուցման մեջ:

Պատմագրական նյութի ընդգրկման առումով աշխատանքն աչքի է ընկնում մեծ ծավալի փաստանյութով՝ քննության առնելով Մխիթարյան դպրոցի, արևմտահայ և արևելահայ պոեզիայի, ինչպես նաև XX դարի դասական հեղինակների ստեղծագործական փորձառությունը: Թումանյանի, Իսահակյանի, Չարենցի և Սահյանի ստեղծագործությունների վերլուծությունները նպաստում են տեսական դրույթների կոնկրետացմանը և ապահովում են նյութի գործառնական հիմնավորում: Միաժամանակ որոշ հատվածներում պատմական-գրական նյութի էքսպոզիցիան գերազանցում է տեսական վերլուծությանը, ինչի հետևանքով առանձին ենթաբաժիններում նկատվում է նկարագրականության գերակշռություն՝ համեմատած հայեցակարգային սեղմման աստիճանի հետ: Սա հատկապես վերաբերում է բալլադի և սոնետի պատմական զարգացման հատվածներին, որտեղ նյութի ծավալային ներկայացումը միշտ չէ, որ ուղեկցվում է համարժեք տեսական ընդհանրացմամբ:

Ատենախոսությունն ավարտվում է ծավալուն **եզրակացություններով**, որտեղ ներկայացված են աշխատության գլխավոր, համոզիչ և փաստարկված եզրահանգումները: Դրանք համակարգված են և ներառում են հայ չափածոյի զարգացման հիմնական փուլերը, արևելահայ և արևմտահայ տաղաչափական համակարգերի տարբերակման խնդիրները, ստրոֆիկ կառուցվածքների տիպաբանական բազմազանությունը և անցումային ձևերի դերը: Այս դրույթները, ընդհանուր առմամբ, համահունչ են աշխատանքի բովանդակությանը և արտացոլում են հեղինակի փորձը՝ ձևավորելու հայ չափածոյի կառուցվածքային զարգացման ամբողջական պատկեր: Այնուամենայնիվ, մի շարք ընդհանրացումներ, մասնավորապես՝ վանկային և շեշտային համակարգերի փոխհարաբերության վերաբերյալ, պահանջում են ավելի խիստ պրոսոդիական և լեզվաբանական հիմնավորում՝ ապահովելու համար դրանց տեսական վավերականությունը:

Ամփոփելով՝ կարելի է արձանագրել, որ ատենախոսությունը առանձնանում է կառուցվածքային գիտահետազոտական մեթոդին համապատասխան կարգա-հասկացութային եզրույթներով և բառապաշարով, որոնք պայմանավորում են հետազոտական բարձր մակարդակ: Գիտական ապարատը միանգամայն ճշգրիտ է, օգտագործված գրականության ցանկը՝ առանց էական բացթողումների, ըստ գիտական խնդրադրության՝ հիմնավորված և համոզիչ:

Այսպիսով, ներկայացված դոկտորական ատենախոսությունը նշանակալի և ծավալուն գիտական փորձ է՝ համակարգելու հայ պոեզիայի ստրոֆիկական կառուցվածքները և ձևավորելու դրանց տիպաբանական մոդելը: Աշխատությունը արժեքավոր ներդրում է հայ տաղաչափագիտության զարգացման գործում՝ հատկապես պատմական համադրության և կառուցվածքային վերլուծության

տեսանկյունից: Բարձր գնահատելով կատարված ծավալուն աշխատանքը, սակայն, առանձնացնենք մի քանի նկատառում, որոնք չեն նվազեցնում աշխատանքի գիտական արժեքը.

1. Ցանկալի կլիներ ավելի հանգամանալից անդրադառնալ ազատ արձակի (վերլիբրի) և ավանդական տաղաչափական կանոնների փոխհարաբերությանը արդի հայ պոեզիայում:
2. Որոշ ձևակերպումներում նկատելի է տերմինաբանական անճշտություն ստրոֆի (տան) և կրկնակի հանգավորման սահմանումների միջև, որոնք կարիք ունեն հստակեցման բանավոր պաշտպանության ժամանակ: Օրինակ, ատենախոսը աշխատանքի 9-րդ էջում նշում է. «Մենք առավել նպատակահարմար ենք համարում կիրառել միջազգայնորեն ընդունված եզրույթը ստրոֆիկան»: Կարծում ենք, որ այդ պարագայում հարկ չկար թարգմանել մետրիկան, հատկապես, որ երկար ժամանակ անվանի մի շարք գրականագետներ ընդունել և օգտագործել են այն. ատենախոսն էլ է նշում դա /տես էջ 5, 16, 22, 27 և այլ Մ. Աբեղյան «Հայոց լեզվի տաղաչափություն (մետրիկա)» (1933) աշխատությունը; 108 էջի № 341 տողատակը; 316-ում Տոմաշևսկու խոսքերը/:

Եզրակացնենք, որ Աշխեն Էդուարդի Ջրբաշյանի «Հայկական ոտանավորի տաղաչափական և ստրոֆիկական կառուցվածքի հիմնախնդիրներ» ատենախոսությունը նվիրված է հայ գրականագիտության համար կարևոր և արդիական մի բնագավառի հայկական չափածոյի կառուցվածքային, տաղաչափական և ստրոֆիկական առանձնահատկությունների համակողմանի ուսումնասիրությանը:

Աշխատանքի կարևորությունն առաջին հերթին պայմանավորված է այն հանգամանքով, որ հայ պոեզիայի ուսումնասիրության մեջ հաճախ առավել մեծ ուշադրություն է դարձվել բովանդակային, գաղափարական և պատկերային կողմերին, մինչդեռ չափի, ռիթմի, տան, հանգի և բանաստեղծական կայուն ձևերի քննությունը մնացել է համեմատաբար ավելի քիչ ուսումնասիրված: Այս իմաստով ատենախոսությունը լրացնում է այդ նկատելի բացը՝ առաջարկելով հայ բանաստեղծական խոսքի վերլուծության առավել ամբողջական և համակարգված մոտեցում: Հեղինակը խնդրին մոտենում է լայն պատմական և տեսական ընդգրկմամբ: Աշխատանքում ներկայացվում են հայ տաղագիտության զարգացման հիմնական փուլերը, քննվում են Մխիթարյանների, Մանուկ Աբեղյանի և հետագա տաղագետների մոտեցումները, բացահայտվում են արևելահայ և արևմտահայ պոեզիայի տաղաչափական տարբերություններն ու ընդհանրությունները:

Արժեքավոր է նաև այն հանգամանքը, որ ուսումնասիրությունը չի սահմանափակվում միայն տեսական դիտարկումներով, այլ հիմնվում է հայ պոեզիայի տարբեր շրջանների և հեղինակների ստեղծագործությունների կոնկրետ վերլուծության վրա:

Առանձնապես գնահատելի է աշխատանքի *գիտական նորույթը*: Հեղինակը հայ պոեզիայի տաղաչափական և ստրոֆիկական կառուցվածքը դիտարկում է ամբողջական համակարգի մեջ՝ ընդգրկելով հին և միջնադարյան բանաստեղծությունը, կլասիցիստական քնարերգությունը, արևմտահայ և արևելահայ պոեզիան, ինչպես նաև արդի բանաստեղծական ձևերը: Կարևոր նշանակություն ունի

նաև հայկական սոնետի, կայուն բանաստեղծական ձևերի, հանգի ռիթմական ու կազմակերպիչ դերի քննությունը:

Ատենախոսությունն աչքի է ընկնում նյութի հարուստ ընդգրկմամբ, տեսական պատրաստվածությամբ, վերլուծական հստակությամբ և գիտական բարեխղճությամբ: Այն ունի ոչ միայն *տեսական, այլև գործնական նշանակություն,* քանի որ կարող է օգտակար լինել բուհական դասընթացներում, տաղաչափության և պոեզիայի կառուցվածքային վերլուծությանն առնչվող հատուկ դասընթացներում, ինչպես նաև հետագա գիտական ուսումնասիրությունների համար:

Ընդհանուր առմամբ, Աշխեն Զրբաշյանի աշխատանքը արժեքավոր ներդրում է հայ տաղագիտության և գրականության տեսության բնագավառում: Այն աչքի է ընկնում թեմայի արդիականությամբ, գիտական նորույթով, նյութի լայն ընդգրկմամբ և հիմնավորված եզրակացություններով, ուստի արժանի է բարձր գնահատականի:

Ատենախոսության **սեղմագիրը** համապատասխանում է հետազոտության բովանդակությանը և ընդգրկում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները, որոնք արտացոլված են հեղինակի հրապարակած 23 գիտական աշխատանքներում:

Սույն ատենախոսության վերաբերյալ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի *Արտասահմանյան գրականության, գրական կապերի և գրականության տեսության* բաժինը դիտողություններ չի ներկայացնում, քանզի կատարված է գիտական բարձր մակարդակի, հստակ համակարգված աշխատանք: Ուստի

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Աշխեն Էդուարդի Զրբաշյանի ***«Հայկական ոտանավորի տաղաչափական և ստրոֆիկական կառուցվածքի հիմնական խնդիրներ»*** թեմայով դոկտորական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի գիտական ատիճանաշնորման կանոնակարգի պահանջներին և ժ. 01. 04 («Գրականության տեսություն») թվանիշին: Այն երաշխավորվում է հրապարակային պաշտպանության:

Միջնորդում ենք Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի գրականագիտության 012 մանագիտական խորհրդին **Աշխեն Էդուարդի Զրբաշյանին** շնորհել իր հայցած բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանը:

Կարծիքը ձևակերպված և հաստատված է Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի արտասահմանյան գրականության, գրական կապերի և գրականության տեսության բաժնի նիստում:

Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի Արտասահմանյան գրականության, գրական կապերի և գրականության տեսության բաժնի վարիչ՝
բ.գ.թ., դոցենտ Ք. Բեջանյանը

Հաստատում եմ բ.գ.թ., դոցենտ Ք. Բեջանյանի ստորագրությունը՝

Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի փոխտնօրեն,
բանասիրական գիտությունների թեկնածու **Մարինե Սարգսյան**

16 հունիսի 2026 թ.